ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 հուլիսի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

89
(3298)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է ԱՌԱՆՑ ՇՈՇԱՓԵԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ հուլիսի 6-ին մեկնարկած աշխատանքային այցը Ռուսաստանի Դաշնություն, որտեղ նա մասնակցել է Եկատերինբուրգում անցկացվող միջազգային արդյունաբերական ցուցահանդեսին, Հայաստանի համար սպասված տնտեսական արդյունքները, ըստ ամենայնի, չի տվել: Այցի շրջանակում Նիկոլ Փաշինյանը հանդիպել է Ռուսաստանի կառավարության ղեկավար Միխայիլ Միշուստինին: Հաշվի առնելով վերջին ամիսներին հայ-ռուսական տնտեսական հարաբերություններում առկա խնդիրները՝ սպասվում էր, որ հանդիպման ընթացքում հնարավոր կլինի հասնել առնվազն որոշակի պայմանավորվածությունների, որոնք կթեթեւացնեն հայկական բիզնեսի առջեւ ծառացած դժվարությունները: Սակայն, «Ժողովուրդ» օրաթերթի կառավարական աղբյուրների փոխանցմամբ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը գոհ չի վերադարձել Եկատերինբուրգից:

Մեր տեղեկություններով՝ հանդիպման ընթացքում քննարկումների փորձեր եղել են, սակայն որեւէ առանցքային հարցի շուրջ գործնական պայմանավորվածություն ձեռք չի բերվել: Մասնավորապես, չի հաջողվել առաջընթաց ապահովել Հայաստանից Ռուսաստան արտահանվող ապրանքների շուրջ առկա սահմանափակումների հարցում: Չեն կարգավորվել նաեւ առանձին ապրանքատեսակների ռուսական շուկա մուտքի հետ կապված խնդիրները, որոնք ամիսներ շարունակ լուրջ դժվարություններ են ստեղծում հայ արտահանողների համար: Նույն իրավիճակն է նաեւ էներգետիկ ոլորտում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ բնական գազի թեմայով եւս որեւէ շոշափելի տեղաշարժ չի արձանագրվել, եւ այդ ուղղությամբ առկա անորոշությունը շարունակում է պահպանվել:

Կառավարական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ընդհանուր առմամբ հանդիպումն անցել է բարեկամական եւ ջերմ մթնոլորտում: Կողմերը երկար զրուցել են, միասին ճաշել, կենացներ են ասել՝ միմյանց գովելով, սակայն այդ ջերմ մթնոլորտը չի վերածվել կոնկրետ քաղաքական կամ տնտեսական արդյունքի:

Արդյունքում, Հայաստանի համար ամենազգայուն տնտեսական հարցերը շարունակում են մնալ բաց:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ առաջիկա օրերին «Ուժեղ Հայաստան»-ի ընտրված պատգամավորները հավաքվելու են՝ հանդիպելու Սամվել Կարապետյանին: Հանդիպման գլխավոր նպատակը լինելու է ոչ միայն խմբակցության աշխատանքների կազմակերպումը, այլեւ առաջիկա խորհրդարանական գործունեության ռազմավարության մշակումը, պաշտոնների բաշխման եւ քաղաքական առաջնահերթությունների քննարկումը: Մեր տեղեկություններով՝ խմբակցության ղեկավարի հարցն արդեն փաստացի լուծված է. այդ պաշտոնում կընտրվի ցուցակը առաջնորդող Նարեկ Կարապետյանը: Իսկ քարտուղարի հարցը դեռ բաց է: Ինչ վերաբերում է ԱԺ ընդդիմադիր փոխխոսնակի պորտֆելին, ապա պաշտոնի շուրջ քննարկումների արդյունքում թիմում առավել հակված են ընտրությունը կանգնեցնել Արամ Վարդեւանյանի վրա: Թեեւ նախկինում այդ պաշտոնի հավակնորդների թվում ակտիվորեն քննարկվում էր նաեւ Էդգար Ղազարյանի անունը, սակայն նրա կողմնակիցների թիվը խմբակցության ներսում զգալիորեն նվազել է: Բայց պաշտոնների բաշխումը «Ուժեղ Հայաստան»-ի միակ գլխացավանքը չէ: Խմբակցությունում արդեն հասկանում են, որ խորհրդարանում իրենց առաջին լուրջ բախումը լինելու է Ազգային Ժողովի ղեկավար մարմինների ձեւավորման ժամանակ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

2026 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ՝ փետրվարի 3-ին, News.am-ին տված հարցազրույցում Աղվան Վարդանյանը բառացի հայտարարել է. «Եթե ես մասնակցեմ ընտրություններին եւ ընդդիմության մեջ լինեմ, բայց իշխանությունը լինի Նիկոլ Փաշինյանը, ես մանդատից կհրաժարվեմ»: Հունիսի 7-ի ընտրություններից հետո արդեն պարզ դարձավ, որ Նիկոլ Փաշինյանը պահպանել է իշխանությունը: Այսինքն՝ ստեղծվել է հենց այն իրավիճակը, որի մասին ամիսներ առաջ խոսում էր Աղվան Վարդանյանը: Սակայն մինչ այս պահը «Հայաստան» դաշինքի պատգամավորը չի հայտարարել, որ հրաժարվում է մանդատից կամ պատրաստվում է կատարել իր հրապարակային խոստումը: Ավելին, ArmLur.am-ի լրագրողը օրերս փորձել է հենց իրենից պարզաբանում ստանալ՝ արդյո՞ք պատրաստվում է կատարել իր հրապարակային խոստումը: Սակայն Վարդանյանը խուսափել է հստակ պատասխան տալուց՝ նշելով միայն, որ «ի տարբերություն շատերի, ես անընդհատ մտածում եմ»: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր շրջանակներում կան քննարկումներ այն մասին, որ Աղվան Վարդանյանը ոչ միայն չի ցանկանում հրաժարվել պատգամավորական մանդատից, այլեւ հավակնում է համակարգող դեր ունենալ «Հայաստան» եւ «Ուժեղ Հայաստան» խմբակցությունների միջեւ: Քանի որ նա «Ուժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանի հարսանիքի քավորն է, որպես երկու ընդդիմադիր խմբակցությունների միջեւ կապող օղակ՝ Վարդանյանը ցանկանում է «Հայաստան» խմբակցության ղեկավար դառնալ: Կստացվի, թե ոչ՝ ժամանակը ցույց կտա:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Հշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, փաստացի, ավարտին է հասցնում Ազգային Ժողովի խմբակցության ղեկավար կազմի ձեւավորման գործընթացը: Անցած շաբաթ կուսակցության վարչությունն արդեն ընտրել է խմբակցության ղեկավարի թեկնածուին՝ այդ պաշտոնում առաջադրելով Արուսյակ Մանավազյանին: Այժմ հերթը խմբակցության քարտուղարի ընտրությանն է: Ակնհայտ է, որ գործող քարտուղար Արթուր Հովհաննիսյանը չի կարող շարունակել պաշտոնավարել նույն կարգավիճակում, ոչ էլ, առավել եւս, որպես խմբակցության ղեկավար. հատկապես այն բանից հետո, երբ ՔՊ վարչությունը խմբակցության ղեկավարի պաշտոնում այլ թեկնածուի ընտրեց: «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ, գործող կարգի համաձայն՝ խմբակցության ղեկավարի թեկնածու ընտրված Արուսյակ Մանավազյանը պետք է խմբակցությանը ներկայացնի քարտուղարի իր թեկնածուին, որից հետո արդեն ՔՊ խմբակցությունը կկայացնի վերջնական որոշումը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ խմբակցության քարտուղարի պաշտոնում կառաջադրվի ՔՊ պատգամավոր Ալխաս Ղազարյանը: Իշխանական շրջանակներում նրան ընդունելի եւ թիմային աշխատանքի տեսանկյունից հավասարակշռված թեկնածու են համարում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԽՆԴԻՐԸ ՄԻԱՅՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԻՆՔ ՉԵՆ»

ArmLur.am-ը զրուցել է ՀԿ անդամ Արման Աբովյանի հետ:

- Պարոն Աբովյան, խնդրում եմ ներկայացրեք՝ ի՞նչ է տեղի ունենում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության եւ մասնավորապես Գագիկ Ծառուկյանի շուրջ:

- Ըստ էության, շարունակվում են, մեր գնահատմամբ, ռեպրեսիվ եւ ապօրինի գործողությունները, որոնք ուղղված են ընդդիմադիր դաշտը թուլացնելուն: Սակայն կարծում եմ՝ իշխանությունները պետք է հասկանան, որ այս պայքարը միայն Գագիկ Ծառուկյանի դեմ չէ. այն ուղղված է նաեւ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների դեմ, ովքեր չեն աջակցել գործող իշխանությանը:

- Ձեր կարծիքով, ինչո՞վ է պայմանավորված այն, որ այս ամենը տեղի ունեցավ հենց վարչապետ Նիկոլ Փաշինյանի Ռուսաստանի այցի օրը:

- Դա բավականին հատկանշական համընկնում է: Չեմ կարող ասել՝ դա ինչ-որ ուղերձ էր Ռուսաստանին, թե այլ նպատակ ուներ, սակայն, հաշվի առնելով այս իշխանությունների նախկին քայլերը, ինձ համար անակնկալ չէ:

- Եթե այս գործընթացները շարունակական բնույթ կրեն, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունն ի՞նչ քայլեր է պատրաստվում ձեռնարկել:

- Մենք վաղուց ենք քննարկել նման զարգացումների հնարավորությունը: Գիտակցում ենք, որ իշխանությունների նպատակը ընդդիմադիր դաշտը թուլացնելն է: Գիտենք՝ ինչպես պետք է արձագանքենք, սակայն այս պահին չեմ ցանկանում մանրամասնել մեր հետագա քայլերը:

- Նախընտրական շրջանում նման զարգացումները հիմնականում կապված էին Սամվել Կարապետյանի անվան հետ, իսկ այժմ առավել շատ վերաբերում են Գագիկ Ծառուկյանին: Ինչո՞վ եք դա պայմանավորում:

- Նախընտրական շրջանում Նիկոլ Փաշինյանը հայտարարում էր, որ բոլորը պատասխանատվության են ենթարկվելու: Այսօր տեսնում ենք, որ նա փորձում է իրականացնել իր հայտարարությունները: Սակայն խնդիրը միայն առանձին անձինք չեն: Իմ կարծիքով՝ իշխանությունների առաջ դրված են արտաքին քաղաքական խնդիրներ, որոնց շրջանակում անհրաժեշտ է թուլացնել ընդդիմությանը:

- Ի՞նչ խնդիրների մասին է խոսքը:

- Իմ գնահատմամբ՝ խոսքը վերաբերում է այնպիսի գործընթացների, ինչպիսիք են սահմանադրական փոփոխությունները, տարածքային հարցերը եւ այլ քաղաքական որոշումներ: Կարծում եմ՝ այդ նպատակներին հասնելու համար իշխանությունները փորձում են ճնշել ընդդիմությանը: Սակայն, կրկնում եմ, այստեղ խնդիրը միայն ընդդիմությունը չէ, այլ նաեւ այն քաղաքացիները, ովքեր չեն աջակցում գործող իշխանությանը:

- Այսօր խոսե՞լ եք Գագիկ Ծառուկյանի հետ:

- Ոչ, դեռ չեմ խոսել: Առավոտյան տեղեկացանք տեղի ունեցող գործընթացների մասին եւ անմիջապես միացանք:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ՝ ԸՆԴԴԵՄ ՓԱՇԻՆՅԱՆԻ

Բագրատ Սրբազանը դատական հայց է ներկայացրել ընդդեմ Նիկոլ Փաշինյանի: Հուլիսի 11-ին Նիկոլ Փաշինյանը արել է հետեւյալ արտահայտությունը. «ՔՊ-ն ստացել է 100 %-ով օրգանիկ քվե, էն մյուս ուժերը ստացել են 100%-ով ընտրակաշառքով քվե... Առանց փողի, նրանց օգտին ոչ մեկը չի քվեարկել, բացարձակապես ոչ մեկը»:

Ըստ հայցվորի՝ Նիկոլ Փաշինյանն այդ կերպ զրպարտել է, արատավորել է իր պատիվը, արժանապատվությունը եւ բարի համբավը եւ պահանջում է դատարանից, որպեսզի դատական վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Նիկոլ Փաշինյանը հրապարակայնորեն հերքի իր պատիվը, արժանապատվությունը եւ բարի համբավը արատավորող, իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալները:

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը միջնորդագիր է ներկայացրել «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) տնօրենին եւ Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարին՝ 2008 թվականի հուլիսի 3-ին ՊՈԱԿ-ի եւ «Ռաֆիկ եւ Գոռ Գասպարյաններ» ՍՊԸ-ի միջեւ կնքված՝ Սեւանա լճի ափամերձ՝ 1215 քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրել է ՊՈԱԿ-ի եւ ՍՊԸ-ի միջեւ կնքված կառուցապատման պայմանագիրը եւ վերաբերելի փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վարձակալության պայմանագրի գործողության ժամկետը սահմանված է եղել մինչեւ 2011 թվականի հուլիսի 2-ը, սակայն, ըստ Կադաստրի կոմիտեի կողմից տրված տեղեկանքի, պայմանագրից ծագող կառուցապատման իրավունքը դադարեցված չէ:

Վերոշարադրյալի հիման վրա, ինչպես նաեւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի համաձայն՝ պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո, առանց սեփականատիրոջը նախօրոք ծանուցելու, հողամասի տիրապետումն ու օգտագործումը կառուցապատողի կողմից չդադարեցնելը հիմք չէ պայմանագրի նորոգման կամ ժամկետի երկարաձգման համար՝ ՊՈԱԿ-ին միջնորդագիր է հասցեագրվել՝ կառուցապատման իրավունքի պետական գրանցումը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ:

ՆՈՐ ՌԱԶՄԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մեծ Բրիտանիան, Նիդերլանդները, Ֆինլանդիան եւ Լեհաստանը հայտարարել են պաշտպանության ֆինանսավորման նոր բազմակողմ մեխանիզմի ստեղծման ուղղությամբ առաջընթացի մասին: Համատեղ հայտարարությունը հրապարակվել է Անկարայում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթնաժողովից առաջ:

Երկրները նշել են, որ իրենց նպատակն է ամրապնդել պաշտպանական ֆինանսավորման ոլորտում համագործակցությունը, բարձրացնել ռազմական ծախսերի արդյունավետությունը եւ զարգացնել դաշնակիցների հավաքական պաշտպանական կարողությունները:

«Հաշվի առնելով միջազգային անվտանգության արագ փոփոխվող միջավայրը եւ Ռուսաստանի՝ Ուկրաինայի դեմ ագրեսիայի հետեւանքները՝ մենք միասին կգործենք՝ ապագա սպառնալիքներին պատրաստ լինելու համար: Մենք շարունակում ենք աջակցել Ուկրաինային՝ իր ինքնիշխանությունը պաշտպանելու եւ ռուսական ագրեսիային դիմակայելու հարցում», - ասվում է հայտարարության մեջ:

Նախաձեռնությունը կոչվում է Բազմակողմ պաշտպանության մեխանիզմ (Multilateral Defence Mechanism, MDM): Այն նախատեսում է պաշտպանության ոլորտում ներդրումների արագացում, համատեղ ռազմական գնումների խթանում եւ ռազմավարական նշանակություն ունեցող պաշտպանական կարողությունների նկատմամբ միասնական պահանջարկի ձեւավորում:

Ըստ հայտարարության՝ մեխանիզմի վերջնական նպատակը դաշնակից երկրների ռազմական կարիքների ապահովումն է՝ ավելի արդյունավետ ֆինանսավորման եւ համատեղ ծրագրերի միջոցով:

Չորս երկրները նշել են, որ պատրաստվում են արագ անցնել պայմանագրային բանակցությունների փուլին՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի ներպետական հաստատման ընթացակարգերը: Նրանց ընդհանուր նպատակն է MDM մեխանիզմը գործարկել մինչեւ 2027 թվականը:

Նախաձեռնողները նաեւ հայտարարել են, որ ցանկանում են ընդլայնել մասնակիցների շրջանակը՝ ներգրավելով այլ դաշնակիցների:

Հաջորդ փուլում Մեծ Բրիտանիան, Նիդերլանդները, Ֆինլանդիան եւ Լեհաստանը նախատեսում են աշխատել հիմնական գործընկերների հետ՝ մեխանիզմը վերածելու ավելի լայն կոալիցիայի, ինչպես նաեւ շարունակել դրա տեխնիկական մշակումը:

Երկրները նաեւ ընդգծել են, որ նոր ֆինանսավորման մոտեցումները պետք է համահունչ լինեն ՆԱՏՕ-ի մյուս դաշնակիցների ծրագրերին՝ բարձրացնելով ռազմական կարողությունների համատեղելիությունն ու արդյունավետությունը:

Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարար Ռեյչել Ռիվսը հայտարարել է, որ Եվրոպայում պաշտպանական գնումների համակարգը հաճախ մասնատված է, թանկ եւ դանդաղ:

«Այդ պատճառով ես աշխատում եմ ստեղծել Բազմակողմ պաշտպանության մեխանիզմ, որը կուժեղացնի համագործակցությունը, կբարելավի գնումների գործընթացը եւ կամրապնդի մեր հավաքական զսպման հնարավորությունները», - նշել է նա:

Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարար Դեն Ջարվիսը եւս ընդգծել է, որ նոր մեխանիզմը կնպաստի երկրի եւ դաշնակիցների անվտանգության ամրապնդմանը:

«Մենք ապրում ենք ավելի վտանգավոր եւ անկանխատեսելի ժամանակաշրջանում: Եվրոպական եւ ՆԱՏՕ-ի դաշնակիցների հետ այս մեխանիզմի շուրջ համագործակցությունը կբարելավի մեր զսպման եւ պաշտպանության հնարավորությունները», - ասել է նա:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՈՎՔԵՐ ՄԱՆԴԱՏ ԿՍՏԱՆԱՆ

Երեկ «Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ Նարեկ Կարապետյանը հայտարարեց, որ իրենք վերցնելու են պատգամավորական մանդատները ու խորհրդարանում կշարունակեն իրենց պայքարը: «Մանդատը տոմս է դեպի կալանավայր»,- հայտարարեց Նարեկ Կարապետյանը: «Մանդատը մեզ ի՞նչ է տալիս, ինձ ի՞նչ է տալիս, իմ ընկերներին ի՞նչ է տալիս, բացի պայքարից, բացի պրոբլեմներից,բարդ, ամենաբարդ, ամենամեծ ճնշումով պրոբլեմներից»,-ասել է Կարապետյանը:

ArmLur.am-ը ներկայացնում է, թե «Ուժեղ Հայաստան» խմբակցությունում ովքեր են ընդգրկված լինելու:

Նշենք, որ «Ուժեղ Հայաստան»-ը ԱԺ-ում ունենալու է 29 պատգամավոր:

1. Նարեկ Կարապետյան (խմբակցության ղեկավար)
2. Արամ Վարդեւանյան
3. Ռուբեն Մխիթարյան
4. Արեգա Հովսեփյան
5. Մամիկոն Ասլանյան
6. Ավետիս Առաքելյան
7. Մարիաննա Ղահրամանյան
8. Իրինա Յոլյան
9. Էդգար Ղազարյան
10. Արգիշտի Դարբինյան
11. Տիգրան Աբրահամյան
12. Լենա Մաթեւոսյան
13. Անդրանիկ Գեւորգյան
14. Հայկ Ֆարմանյան
15. Գրիշա Թամրազյան
16. Արթուր Դանիելյան
17. Լիաննա Գասպարյան
18. Վաղինակ Վարդանով
19. Գառնիկ Դավթյան
20. Դավիթ Ղազինյան (այս պահին կալանավորված է)
21. Լիաննա Մանուկյան
22. Վրույր Այվազյան
23. Սյուզաննա Ավետիսյան
24. Հարություն Հարությունյան
25. Շիրազ Մանուկյան
26. Անուշ Միրզոյան
27. Անուշավան Մանուչարյան
28. Լեւոն Նալբանդյան
29. Ավչյան Արման (ասորի)

Ս. Գ.

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Հոգեշնորհ Տ. Իգնատիոս վարդապետ Մալխասյանը, ազատվելով Սուրբ Գայանե վանքում ստանձնած պարտականություններից, նշանակվել է Խոր Վիրապ վանքի վանահայր:

Հոգեշնորհ Տ. Հովհաննես աբեղա Թորգոմյանը, ազատվելով Մայր Աթոռի «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի Հոգեւոր տեսչի պարտականություններից, ուսումնառության է կոչվել Շվեյցարիայի Բոսսե վանքում:

Արժանապատիվ Տ. Գառնիկ քահանա Ավոյանը եւ Տ. Դավիթ քահանա Իգիթյանը ծառայության են նշանակվել Բուլղարիայի հայոց թեմում:

ՈՎՔԵՐ ԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՆԱՏՕ-Ի ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԸ

Երեկ Թուրքիայի մայրաքաղաք Անկարայում մեկնարկել է ՆԱՏՕ-ի երկօրյա գագաթնաժողովը, որի առանցքային թեմաները դաշինքի անդամ երկրների պաշտպանական ծախսերի ավելացումը եւ Ուկրաինային աջակցության շարունակությունն են:

Գագաթնաժողովը տեղի է ունենում այն պայմաններում, երբ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կրկին ճնշում է գործադրում ՆԱՏՕ-ի անդամ երկրների վրա՝ պահանջելով ավելացնել պաշտպանության ոլորտի ֆինանսավորումը: Ակնկալվում է, որ եվրոպական պետությունները կհայտարարեն միլիարդավոր դոլարների նոր ռազմական պայմանագրերի մասին:

Անկարայում հավաքվել են ՆԱՏՕ-ի բոլոր 32 անդամ երկրների ղեկավարները: Գագաթնաժողովին մասնակցում են նաեւ Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին եւ Հարավային Կորեայի նախագահ Լի Ջե Մյունը, թեեւ նրանց երկրները դաշինքի անդամ չեն:

Ավստրալիան, Ճապոնիան եւ Նոր Զելանդիան ներկայացված են պաշտպանության կամ արտաքին գործերի նախարարների մակարդակով: Մասնակցում են նաեւ Բահրեյնի, Քուվեյթի, Կատարի եւ Արաբական Միացյալ Էմիրությունների ներկայացուցիչները:

Միեւնույն ժամանակ, Սիրիայի նախագահ Ահմեդ ալ-Շարաան գագաթնաժողովին չի մասնակցի, սակայն Անկարայում նախատեսված է նրա երկկողմ հանդիպումը Դոնալդ Թրամփի հետ:

ՆԱՏՕ-ի նախորդ գագաթնաժողովում անդամ երկրները համաձայնել էին մինչեւ 2035 թվականը պաշտպանական ծախսերը հասցնել ՀՆԱ-ի 5 տոկոսի, որից 3.5 տոկոսը պետք է ուղղվի ռազմական ծախսերին, իսկ 1.5 տոկոսը՝ անվտանգության հետ կապված այլ կարիքներին: Այս տարվա հանդիպման գլխավոր նպատակներից մեկն այդ պարտավորությունների գործնական իրականացումն է:

Գերմանական Մարշալի հիմնադրամի Թուրքիայի տարածաշրջանային տնօրեն Օզգյուր Ունլուհիսարջըքլին նշել է, որ եթե նախորդ տարի խոսքը վերաբերում էր ֆինանսավորման ավելացմանը, ապա այժմ քննարկվում է, թե ինչպես այդ ծախսերը վերածել իրական ռազմական հնարավորությունների:

Միաժամանակ որոշ փորձագետներ զգուշացնում են, որ նույնիսկ միլիարդավոր դոլարների ներդրումները անմիջապես չեն վերածվելու նոր ռազմական կարողությունների, քանի որ սպառազինության արտադրությունն ու մատակարարումները տարիներ են պահանջում:

Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկին չորեքշաբթի երկկողմ հանդիպում կունենա Դոնալդ Թրամփի հետ: Սպասվում է, որ նա կխնդրի ԱՄՆ-ին լրացուցիչ Patriot հակաօդային պաշտպանության համակարգեր տրամադրել, քանի որ վերջին շրջանում Ռուսաստանի հարվածներն Ուկրաինայի քաղաքների ուղղությամբ ուժգնացել են: Վերջին հարձակման հետեւանքով միայն Կիեւում զոհվել է առնվազն 11 մարդ:

Կիեւի համար կարեւոր է ստանալ ոչ միայն նոր սպառազինություն, այլեւ ՆԱՏՕ-ի անդամ երկրների քաղաքական երաշխիքները, որ ռազմական աջակցությունը շարունակական կլինի առաջիկա մեկ-երկու տարիներին:

Միեւնույն ժամանակ եվրոպական երկրները փորձում են նաեւ պահպանել հարաբերությունները Վաշինգտոնի հետ: Վերլուծաբանների կարծիքով՝ գագաթնաժողովում սպասվող բազմամիլիարդանոց ռազմական պայմանագրերը նաեւ նպատակ ունեն մեղմելու Թրամփի դժգոհությունը եվրոպացի դաշնակիցների պաշտպանական ծախսերի վերաբերյալ:

Գագաթնաժողովից առաջ ԱՄՆ նախագահը հերթական անգամ քննադատել է Գերմանիայի պաշտպանական բյուջեն՝ այն անվանելով «ծիծաղելի»: Ի պատասխան՝ Գերմանիայի կանցլեր Ֆրիդրիխ Մերցը հայտարարել է, որ իր երկիրը երբեք այսքան մեծ ներդրում չի կատարել սեփական պաշտպանունակության ամրապնդման համար:

Միաժամանակ Վաշինգտոնը հայտարարել է ՆԱՏՕ-ի եվրոպական երկրներից իր ռազմական ինքնաթիռների, կործանիչների եւ սուզանավերի մի մասի փուլային դուրսբերման մասին, ինչը եւս քննարկումների հիմնական թեմաներից է դարձել:

Անկարայի գագաթնաժողովի գլխավոր նպատակն այս փուլում ոչ այնքան նոր որոշումների ընդունումն է, որքան դաշնակիցների միասնականության ցուցադրումը՝ չնայած առկա տարաձայնություններին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՉԵՆ ԿԱՐՈՂ ԱՐՏԱՀԱՆԵԼ

ՍԱՏՄ-ն տեղեկացնում է, որ 2026 թվականի հուլիսի 10-ից արգելվում է Հայաստանի Հանրապետությունից բուսասանիտարական ենթահսկման բեռների առեւտրային քանակների արտահանումը ֆիզիկական անձանց կողմից: Համաձայն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի, ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով տեղափոխվող բուսասանիտարական ենթահսկման արտադրանքի ընդհանուր քաշը չի կարող գերազանցել 5 կիլոգրամը:

Տնտեսավարողներին եւ քաղաքացիներին կոչ ենք անում արտահանման գործընթացը կազմակերպել բացառապես սահմանված պահանջներին համապատասխան՝նախապես հստակեցնելով արտահանվող արտադրանքի նկատմամբ կիրառվող բուսասանիտարական պահանջները:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը շարունակելու է իրականացնել հետեւողական վերահսկողություն եւ անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրել արտահանողներին՝ ապահովելով բուսասանիտարական արտադրանքի անվտանգության եւ արտահանման պահանջների լիարժեք պահպանումը:

ԱԴՐԲԵՋԱՆԸ G20–Ի ՑԱՆԿՈՒՄ Է

ԱՄՆ-ի կողմից G20-ի նախագահության պաշտոնական կայքում հրապարակվել է այն երկրների ցանկը, որոնք հրավիրվել են մասնակցելու 2026 թվականի դեկտեմբերի 14-15-ը Մայամիում կայանալիք գագաթնաժողովին: Հրավիրվածների թվում է նաեւ Ադրբեջանը:

G20-ը («Քսանյակի խումբը») համաշխարհային տնտեսական համագործակցության գլխավոր հարթակն է, որը միավորում է աշխարհի առաջատար տնտեսությունները:

Խմբի կազմում են՝ Արգենտինան, Ավստրալիան, Բրազիլիան, Կանադան, Չինաստանը, Ֆրանսիան, Գերմանիան, Հնդկաստանը, Ինդոնեզիան, Իտալիան, Ճապոնիան, Մեքսիկան, Ռուսաստանը, Սաուդյան Արաբիան, Հարավային Աֆրիկան, Հարավային Կորեան, Թուրքիան, Միացյալ Թագավորությունը, ԱՄՆ-ը եւ Եվրոպական միությունը, ինչպես նաեւ Աֆրիկյան միությունը:

Մայամիում կայանալիք գագաթնաժողովին որպես հրավիրված երկրներ կմասնակցեն՝Ադրբեջանը,Ղազախստանը, Ուզբեկստանը, Ֆինլանդիան, Իռլանդիան, Նիդերլանդները,Նորվեգիան, Կատարը, Սինգապուրը, Իսպանիան եւ Արաբական Միացյալ Էմիրությունները:

G20-ի գագաթնաժողովները հնարավորություն են տալիս քննարկելու համաշխարհային տնտեսական օրակարգն ու ռազմավարական մարտահրավերները՝ հիմնական անդամների եւ հրավիրված գործընկերների մասնակցությամբ:

Հիշեցնենք, որ 2025 թվականին գագաթնաժողովը անցկացվել էր Յոհանեսբուրգում:

ՏՎՅԱԼՆԵՐ

Ի՞ՆՉ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐՈՎ ԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթներից մեկով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Գ.Ծ.-ի կազմակերպմամբ մի շարք անձինք 2022-2024 թվականների ընթացքում առերեւույթ կատարել են առանձնապես խոշոր չափերով խարդախություն եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում:

Մասնավորապես, ըստ քրեական վարույթում առկա տվյալների, Գ.Ծ.-ի կազմակերպմամբ եւ ղեկավարմամբ գործող հանցավոր խմբի անդամները Իրան-Հայաստան առեւտրային կապերը զարգացնելու նպատակով ԻԻՀ քաղաքացի հանդիսացող անձանց հետ ձեռք են բերել համապատասխան պայմանավորվածություններ, որոնց շրջանակում հիմնել են նաեւ համատեղ իրավաբանական անձինք: Այնուհետեւ, Իրան-Հայաստան լոգիստիկ բեռնափոխադրման կապ ստեղծելու քողի ներքո, գործելով խաբեության եւ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու ուղղակի դիտավորությամբ՝ ԻԻՀ-ում ձեռնարկատեր հանդիսացող մի շարք անձանց կողմից ղեկավարվող եւ այնտեղ գործունեություն ծավալող ընկերություններից ձեռք են բերել եւ Հայաստանի Հանրապետություն են ներմուծել 52 միավոր տրանսպորտային միջոցներ, տեխնիկաներ, վառելիք եւ տարբեր տեսակի ապրանքներ, ապա ներկրումները քողարկելով տնտեսական գործունեություն ծավալելու ձեւական դրսեւորումներով, կեղծել են ներմուծման մաքսային հայտարարագրերը եւ պաշտոնական այլ փաստաթղթեր, նախապես առաջացած դիտավորությամբ հափշտակել են ընդհանուր 21 մլն 72 հզր 827 ԱՄՆ դոլարին համարժեք շուրջ 8 մլրդ 126 մլն 946 հզր 460 ՀՀ դրամ արժողության գույքերը:

Այնուհետեւ, հանցավոր խմբի անդամները նպատակ ունենալով օրինականացնել վերը նշված հանցավոր գործունեության արդյունքում ձեռք բերված գույքերը՝ դրանց հանցավոր ծագումը քողարկելու նպատակով, ապրանքների հափշտակությունից հետո ՀՀ ներմուծման փաստաթղթերը կեղծելու, դրանց մի մասը նաեւ կեղծ փաստաթղթերի հիման վրա օտարելու եղանակով քողարկել են խարդախությամբ հափշտակված տրանսպորտային միջոցների եւ մյուս ապրանքների հանցավոր ծագումը, փոխակերպել եւ վաճառքից առաջացած գումարները միախառնել են իրենց այլ եկամուտներին՝ թաքցնելով հանցավոր ճանապարհով ստացված գույքի եւ դրամական միջոցների իրական ծագման բնույթը՝ դրանց տալով օրինական տեսք:

Բացի այդ, Գ.Ծ.-ն հանդիսանալով ՀՀ-ում պետական գրանցում ստացած ՍՊ ընկերության իրական շահառու, վառելիքի ներկրմամբ եւ վաճառքով զբաղվող Ռ.Կ.-ի հետ գալով նախնական հանցավոր համաձայնության, կազմակերպել եւ ղեկավարել է վերջինիս կողմից վառելիքի ներկրման գործարքի շրջանակում ԻԻՀ քաղաքացի Յ.Ի.-ից խաբեությամբ առանձնապես խոշոր չափերով՝ 934 հզր 465 ԱՄՆ դոլար գումարի հափշտակությունը, որի արդյունքում առաջացած գումարները միախառնել է իր ղեկավարած ՍՊ ընկերության օրինական շրջանառությանը, այդպիսով քողարկելով եւ թաքցնելով հանցավոր ճանապարհով ստացված գույքի եւ դրամական միջոցների իրական ծագման բնույթը՝ դրանց տալով օրինական տեսք:

Հանցանքների կատարումը վկայող փաստերի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության քննիչի կողմից միջնորդություններ են ներկայացվել հսկող դատախազին Գ.Ծ.-ի նկատմամբ Քրեական օրենսգրքի 46-255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ) (առանձնապես խոշոր չափերով խարդախությունը կազմակերպելը), 46-296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ) (առանձնապես խոշոր չափերով փողերի լվացումը կազմակերպելը), հանցավոր խմբի անդամներից մեկի նկատմամբ՝ 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ) եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ), հանցավոր խմբի մյուս անդամի նկատմամբ՝ 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որոնք բավարարվել են:

Առանձնապես խոշոր չափերով խարդախության, առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման եւ առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու դեպքերի առթիվ գլխավոր վարչությունում քննվող մեկ տասնյակից ավելի քրեական վարույթների նախաքննության շրջանակում ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՊԵԿ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ 70-ից ավելի հասցեներում իրականացվել են միաժամանակյա խուզարկություններ, որոնց արդյունքում հայտնաբերվել են քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստաթղթեր, առարկաներ, այդ թվում՝ հափշտակված տրանսպորտային միջոցները:

Գ.Ծ.-ն եւ հանցավոր խմբի եւս մեկ անդամ ձերբակալվել են՝ դատարան ներկայացնելու նպատակով, հանցավոր խմբի մյուս անդամի վերաբերյալ կայացվել է ձերբակալման որոշում:

ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԵՋ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով հիմնավորվել է, որ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի պաշտոնատար անձն իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, հովանավորչություն կատարելու համար ստացել է կաշառք: Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ հիշյալ պաշտոնատար անձը կազմակերպել է համալսարանի նույն ամբիոնի երկու դասախոսների՝ դասապրոցեսների ընթացքում չնախատեսված արձակուրդ տրամադրելու, դասաժամերն այլ դասախոսներին բաշխելու գործընթացը եւ դրա դիմաց 2025 թվականի հոկտեմբերին որպես կաշառք ստացել տարբեր չափերի գումարներ:

Բացի այդ, ամբիոնի վարիչն ասպիրանտի օգտին հովանավորչության, այն է՝ ատենախոսության պաշտպանության գործընթացն անխոչընդոտ կազմակերպելու նպատակով ընդունել է վերջինիս կաշառք տալու առաջարկը եւ 2025 թվականի դեկտեմբերին նրանից որպես կաշառք ստացել ոսկյա զարդ:

Ամբիոնի վարիչին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (3 դրվագ), իսկ նրան կաշառք տված 3 դասախոսներին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Ամբիոնի վարիչի նկատմամբ որպես խափանման միջոցներ են կիրառվել բացակայելու արգելքը եւ պաշտոնավարման կասեցումը: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է

Լոռու մարզի դատախազությունում, Լոռու մարզպետարանի միջնորդությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքում, պարզվել է, որ Վանաձորի Հրանտ Մաթեւոսյանի անվան այգու տարածքները վարձակալած եւ փաստացի տիրապետող 22 սուբյեկտների կողմից դրանք օգտագործվում են պայմանագրերի խախտումներով ու ոչ նպատակային: Արդյունքում՝ այգին հայտնվել է անբարեկարգ վիճակում: Լոռու մարզի դատախազությունում կատարված ուսումնասիրությունների արդյունքում՝ միջնորդագիր է ուղարկվել Վանաձորի համայնքապետարան՝ վերոնշյալ 22 սուբյեկտների հետ կնքված վարձակալության եւ անհատույց օգտագործման պայմանագրերը խզելու նպատակով: Միջնորդագրի արդյունքում՝ 2026 թվականի հունիսի 4-ին դադարեցվել է այգու տարածքում՝ Կ.Դեմիրճյան փողոց 25-1/2 հասցեում գտնվող՝ 405 քմ մակերեսով, 4 միլիոն 208 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով եւս մեկ հողամասի նկատմամբ իրավաբանական անձի վարձակալության իրավունքը. հողամասը վերադարձվել է համայնքի տիրապետմանը:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ

Համայնքային ոստիկանության Ախուրյանի բաժնում հունիսի 29-ին տեղեկություն էր ստացվել, որ Ախուրյանի փողոցներից մեկում անհայտ անձը «Հյունդայի» մակնիշի ավտոմեքենայով զբաղվում է թմրանյութերի իրացմամբ: Տեղեկությունն իրացնելիս ոստիկանության ծառայողները նկատել են անձին, ով փաթեթներ է տեղադրել կիսաքանդ շինության մոտակայքում եւ լուսանկարահանել դրանք: Թմրանյութ իրացնելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով վերջինս ձերբակալվել եւ ներկայացվել է Ախուրյանի բաժին: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում նույն օրը՝ ժամը 22.30-ին դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է 4 գրամ քաշով 2 փաթեթ՝ մարիխուանայի նմանվող զանգվածով: 27-ամյա երիտասարդին պատկանող ավտոմեքենայի խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանայի նմանվող 32 փաթեթ՝ 81 գրամ քաշով, ինչպես նաեւ դեղնավուն հեղուկով լցված 1 կաթոցիչ:

Նույն օրը համայնքային ոստիկաններն օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Նոր Խարբերդի բնակիչն իր մոտ կանեփի բույսից պատրաստած զանգված է պահում: Այցելության ժամանակ 24-ամյա երիտասարդը ներկայացրել է կանեփի բույսից պատրաստած մանրացրած եւ չորացրած 3 գրամ քաշով 1 փաթեթ: Երիտասարդը ձերբակալվել է եւ կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել Մասիսի քննչական բաժին:

Կապանի համայնքային ոստիկանները հուլիսի 3-ին օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Տանձավեր գյուղի բնակիչը կանեփի թփեր է աճեցնում: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում տղամարդը հայտնաբերվել եւ ներկայացվել է բաժին: Բացատրական աշխատանքի շնորհիվ 41-ամյա տղամարդը հայտնել է, որ անասնագոմի հարակից տարածքում իր անձնական օգտագործման համար կանեփի մոտ 12 թուփ է աճեցրել: Սյունիքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված վարույթի շրջանակում, նույն օրը կատարված զննությամբ, նշված վայրից հայտնաբերվել են կանեփի թփերը:

● *Հանրապետությունում հուլիսի 3-ից 6-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 5 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

2 ՏԱՐԻ ԱՆՑ

2024թ. մայիսի 27-ի ջրհեղեղը մեծ վնասներ պատճառեց Տավուշի մարզին: Այն Դիլիջան համայնքի տարածքում 10 տեղ քանդեց Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի եզրերը: 2025 եւ 2026 թվականներին բազում անգամ տեղեկատվական հարցում եմ կատարել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին, թե ջրհեղեղից քանդված ավտոճանապարհի եզրերը երբ են վերականգնվելու: Մարզպետն ամեն անգամ պատասխանել է, որ մինչեւ տարեվերջ վերականգնվելու են: Ջրհեղեղից ավելի քան 2 տարի հետո իրականացվում են բնական տարերքից քանդված հատվածների վերականգնման աշխատանքները: Դիլիջան-Իջեւան Մ4 միջպետական ավտոճանապարհի ջրհեղեղի հետեւանքով վնասված 10 ճանապարհահատվածների վերակառուցման գործը օրերս է սկսվել: Վերականգնվող տեղամասերը ներառում են նաեւ Թեղուտ եւ Հաղարծին բնակավայրերի որոշակի տարածքներ: Ծրագրի շրջանակում իրականացվում են հենապատերի կառուցման եւ վերականգնման, որոշ հատվածներում գետի հունի մաքրման, ինչպես նաեւ վնասված ճանապարհահատվածների ասֆալտբետոնե ծածկի վերականգնման աշխատանքներ: Ծրագիրն իրականացվում է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության կողմից, շինարարական աշխատանքներն իրականացնում է «Մոստկոնտրակտ» ՍՊԸ-ն:

ՆՈՐ ԿԱՐԳ

Նոր ուսումնական տարում՝ այս տարվա սեպտեմբերից մարզերի հանրակրթական դպրոցները անցնելու են ԿԳՄՍ նախարարության ենթակայության ներքո, միայն դպրոցների վարչատնտեսական մասն է համակարգելու մարզպետի աշխատակազմը: Հունիսի 26-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական քանի դպրոցում է նշանակված վարչատնտեսական մասի համակարգող: Դուք նախկինում հայտնել եք, որ դպրոցներում վարչատնտեսական մասի համակարգող նշանակում եք այդ դպրոցներում նոր կարգով տնօրենի ընտրությունից հետո: Վարչատնտեսական մասի համակարգող նշանակելիս ձեր նշած կարգը պահպանո՞ւմ եք»: Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արման Գեւորգյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Հունիսի 26-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 76 հանրակրթական դպրոցներից 21-ում նշանակված է վարչատնտեսական մասի համակարգող, որոնց նշանակում են այն դպրոցներում, որոնք անցել են կառավարման նոր համակարգի»: Մարզպետ Հ. Ղալումյանն անտեսել է այն հարցը, թե արդյոք ինքը պահպանել է կարգը, երբ վարչատնտեսական մասի համակարգող մարզպետը նշանակում է դպրոցներում նոր կարգով տնօրենի ընտրությունից հետո: Տավուշի հանրակրթական բազում դպրոցներում նոր կարգով դպրոցի տնօրենի ընտրություն չի կատարվել, սակայն մարզպետն այդ դպրոցի վարչատնտեսական մասի համակարգող է նշանակել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՎ Է ԴԱՏԱՎՈՐ ԳԱՐԻԿ ԱԲԵԼՅԱՆԸ

ՔՆՆԵԼՈՒ Է ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԿԱԼԱՆՔԻ ՀԱՐՑԸ

Հանրության ուշադրության կենտրոնում է հայտնվել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Գարիկ Աբելյանը, որի վարույթում է գտնվում այն միջնորդությունը, որով պետք է որոշվի՝ կիրառել կալանքը որպես խափանման միջոց, թե ոչ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ:



ArmLur.am-ը տեղեկացավ, որ Գարիկ Աբելյանը ծնվել է 1993 թվականի փետրվարի 23-ին՝ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում:

Կրթությունը

2010 թվականին ավարտել է Գորիսի թիվ 2 դպրոցը:

2011-2013 թվականներին ծառայել է Հայաստանի զինված ուժերում:

2016 թվականին ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2018 թվականին՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ գերազանց առաջադիմությամբ:

2023 թվականից Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ է:

Մասնագիտական ուղին

Իրավաբանական ոլորտում նրա աշխատանքային գործունեությունը սկսվել է 2016 թվականին, երբ նշանակվել է Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի օգնական:

Այնուհետեւ աշխատել է Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման եւ իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամում՝ որպես կարճաժամկետ փորձագետ:

2019-2021 թվականներին զբաղեցրել է դատախազի եւ ավագ դատախազի պաշտոններ Սյունիքի մարզի դատախազությունում, այնուհետեւ՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում:

2022 թվականին տեղափոխվել է Արդարադատության նախարարություն, որտեղ նախ աշխատել է Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնում որպես փորձագետ, ապա ղեկավարել է Քրեական օրենսդրության, քրեակատարողական եւ պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչությունը:

2023 թվականի հուլիսի 6-ին ՀՀ նախագահի թիվ ՆՀ-228-Ա հրամանագրով նշանակվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:

2024 թվականից նա պաշտոնավարում է որպես Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր:

Հենց դատավոր Գարիկ Աբելյանն է քննելու Գագիկ Ծառուկյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը եւ կայացնելու համապատասխան դատական ակտը: Այս գործը փաստաբանները հիմնազուրկ եւ ծիծաղելի են որակում:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ

ԲՀԿ խոսնակ Իվետա Տոնոյանը գրում է.

Հայաստանի Հանրապետության ընդդիմադիր ուժերը վճռականորեն դատապարտում են այսօրվա իշխանությունների կողմից «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանի նկատմամբ իրականացվող բռնաճնշումները, ինչպես նաեւ նրան պատկանող ձեռնարկություններում իրականացվող խուզարկությունները:

Ներքոստորագրյալ ընդդիմադիր ուժերն իրենց աջակցությունն են հայտնում Գագիկ Ծառուկյանին եւ վերահաստատում, որ քաղաքական հայացքների, ընդդիմադիր գործունեության կամ քաղաքական դիրքորոշման համար որեւէ անձի նկատմամբ ճնշումն անընդունելի է իրավական եւ ժողովրդավարական պետությունում: Դա մարտահրավեր է ողջ հասարակությանը:

Մենք մեր համերաշխությունն ենք հայտնում նաեւ բոլոր քաղբանտարկյալներին եւ այն քաղաքացիներին, որոնք քաղաքական դրդապատճառներով ենթարկվում են հետապնդումների կամ ճնշումների, եւ վերահաստատում ենք մեր վճռականությունը՝ համատեղ պաշտպանելու նրանց իրավունքները, ժողովրդավարական արժեքներն ու Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը:

Մենք տեղի ունեցողը դիտարկում ենք որպես հերթական ապացույցն այն բանի, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք Հայաստանում հաստատված քաղաքական զանգվածային հետապնդումների ժամանակաշրջանն անշեղորեն ընթանում է դեպի բռնապետություն: Քաղաքական բանտարկյալների, ինչպես նաեւ քաղաքական դրդապատճառներով հետապնդվող անձանց թիվն օրեցօր աճում է:

Իշխանությունների սանձազերծած հետապնդումները որեւէ աղերս չունեն արդարադատության իրականացման եւ հանցավորության դեմ պայքարի հետ:

Ակնհայտ է, որ այս հետապնդումները պայմանավորված են բացառապես Գագիկ Ծառուկյանի քաղաքական գործունեությամբ: Նիկոլ Փաշինյանը չի էլ թաքցնում իր բուն շարժառիթները: Նա հետապնդումների մեկնարկի հրահանգը հնչեցրել է նախընտրական հանրային հավաքներից մեկի ժամանակ՝ սպառնալով ունեզրկել ընտրապայքարին մասնակցելու հայտ ներկայացրած կուսակցության ղեկավարին:

Ակնհայտ է, որ այս գործողությունները նպատակ ունեն՝ հետեւողականորեն չեզոքացնելու եւ փաստացի գլխատելու ընդդիմությանը, ճնշելու հանրային անհամաձայնության ցանկացած դրսեւորում եւ վախի մթնոլորտ ձեւավորելու կարեւոր քաղաքական գործընթացների նախաշեմին, այդ թվում՝ Հայաստանի ազգային եւ պետական շահերին առնչվող հարցերում:

Նման գործելաոճը ծանր հարված է հասցնում ոչ միայն երկրի քաղաքական համակարգին, այլեւ տնտեսությանը: Սեփականության իրավունքի ոտնահարումը, խոշոր ձեռնարկատերերի տնտեսական գործունեության նկատմամբ ճնշումները եւ իրավապահ մարմինների օգտագործումը որպես քաղաքական պայքարի գործիք անխուսափելիորեն կհանգեցնեն գործազրկության աճի, ներդրումային միջավայրի հետագա վատթարացման եւ տնտեսական անկայունության խորացման:

Մենք համոզված ենք, որ ստեղծված իրավիճակում առավել քան երբեւէ անհրաժեշտ է ընդդիմադիր եւ հասարակական բոլոր ուժերի, ինչպես նաեւ ամբողջ հասարակության համախմբումը: Միայն համատեղ ջանքերով հնարավոր կլինի պաշտպանել Հայաստանի Հանրապետության պետականությունը, սահմանադրական կարգը, ժողովրդավարական սկզբունքներն ու քաղաքացիների իրավունքները:

Մենք կոչ ենք անում Հայաստանի միջազգային գործընկերներին, միջազգային կազմակերպություններին եւ մարդու իրավունքների ու ժողովրդավարական ինստիտուտների պաշտպանությամբ զբաղվող կառույցներին՝ անհապաղ տալու տեղի ունեցող իրադարձությունների սկզբունքային գնահատականը եւ հրապարակայնորեն արտահայտելու իրենց դիրքորոշումը՝ ժողովրդավարական նորմերի, մարդու իրավունքների ոտնահարման եւ իշխանության քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ քաղաքական դրդապատճառներով իրականացվող հետապնդումների վերաբերյալ:

Հայաստանին անհրաժեշտ են ոչ թե քաղաքական բռնաճնշումներ, այլ իրավունքի գերակայություն, անկախ արդարադատություն, քաղաքական բազմակարծություն եւ ազգային համախմբում: Մենք հայտարարում ենք, որ իշխանությունների կողմից իրականացվող այս աննախադեպ ռեպրեսիվ արշավը չի կարող կոտրել կամ կանգնեցնել ընդդիմության եւ Հայաստանի հասարակության արդարության, ազատության, ժողովրդավարության եւ պետականության պահպանման համար մղվող պայքարը: Ընդդիմադիր ուժերը շարունակելու են բացառապես օրինական եւ քաղաքական միջոցներով պաշտպանել քաղաքացիների իրավունքները, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը, ազգային շահերը եւ հայկական պետականության ապագան:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն

«Հայաքվե» ազգային քաղաքացիական միավորում

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն

Հայաստանի հանրապետական կուսակցություն

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն

«Դեմոկրատական այլընտրանք» կուսակցություն

«Մայր Հայաստան» կուսակցություն

Հայաստանի դեմոկրատական կուսակցություն»:

● *Հայաստանի Հանրապետությունում հուլիսի 3-ից 6-ը գրանցվել է 33 դեպք՝ ֆիզիկական ներգործության:*

JASMINE HOME

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՔՈՒՅՐԵՐԻ ԲԻԶՆԵՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Քույրեր Աննան եւ Անին տասը տարի առաջ ստեղծեցին Jasmine Home-ը՝ շուկային առաջարկելով տեքստիլի տասնյակ բարձրորակ պարագաներ՝ վերմակներ, անկողնային հավաքածուներ, բարձեր եւ բազմաթիվ այլ արտադրատեսակներ:

Տարիներ առաջ, երբ Jasmine Home-ը դեռ նոր էր մեկնարկել գործունեությունը, տեքստիլի արտադրությունները շուկայում քիչ էին: Ժամանակի ընթացքում, աճող մրցակցությանը զուգահեռ, քույրերը, տարբեր վերապատրաստումներ եւ ուսումնասիրություններ իրականացնելով, ընդլայնեցին բիզնեսը:

Նպատակին հասնելու ճանապարհին Jasmine Home-ի գործընկերը դարձավ Ակբա բանկը, որի հետ համագործակցությամբ ընկերությունը կարողացավ ընդլայնվել եւ մեծացնել արտադրանքի ծավալները:

«Զրոյից հիմնված եւ զարգացած բիզնես է Jasmine-ը: Ի սկզբանե մեր նպատակը մեծ արտադրամաս եւ շատ աշխատատեղեր ստեղծելն էր. այդ պատկերը մեր գլխում միշտ ունեցել ենք: Երբ հասկացանք, որ հաջողում ենք, այդ ժամանակ արդեն կարիք կար նոր ֆինանսական ներդրումների եւ հենց այդ ժամանակահատվածում մեզ վստահեց եւ աջակցեց Ակբա բանկը, որը կին ձեռներեցներին առաջարկում էր երկարաժամկետ ֆինանսավորում, ինչի արդյունքում մեր բիզնեսը կարողացավ աճել»,- նշում է Jasmine Home-ի համահիմնադիր Աննա Դարբինյանը:

«Մենք այս պահին քսանից ավելի արտադրատեսակ ունենք, որոնք մասսայական արտադրության են՝ վերմակներ, անկողնային հավաքածուներ, բարձեր եւ այլ արտադրատեսակներ: Աշխատանքի ընթացքում ժամանակ առ ժամանակ փոխվում են մեր դերերը. փորձում ենք փոխլրացնել միմյանց»,- նշում է Jasmine Home-ի համահիմնադիր Անի Դարբինյանը:

Jasmine Home-ում այժմ զբաղվում են եվրոպական շուկայի ուսումնասիրությամբ՝ արտահանում կազմակերպելու նպատակով: Առաջիկայում էլ Jasmine Home-ը կարող է դառնալ նաեւ հագուստ արտադրող ընկերություն. փորձնական նմուշներն արդեն կարված են:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից (Գ)

ՀԱՆԴԻՊՄԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՆ ՈՒ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ» ՀԱՐՑԸ

Ադրբեջանական APA լրատվական գործակալությունը հայտնում է, որ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի եւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հանդիպման ընթացքում քննարկվելիք հիմնական թեմաներից մեկը լինելու է Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակը եւ «Զանգեզուրի միջանցքը»:

Ըստ APA-ի՝ այս մասին հայտարարել է Թուրքիայի փոխնախագահ Ջեւդեթ Յըլմազը՝ պատասխանելով գործակալության Թուրքիայի բյուրոյի հարցերին:

Յըլմազի խոսքով՝ Էրդողան-Թրամփ բանակցությունների օրակարգում, տարածաշրջանային, գլոբալ եւ երկկողմ հարաբերություններին վերաբերող հարցերից բացի, ընդգրկված կլինի նաեւ Հարավային Կովկասի թեման:

«Հարավային Կովկասը մեծ նշանակություն ունի: Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առկա խնդիրները մեծ մասամբ լուծվել են: Այժմ մենք գտնվում ենք խաղաղության համաձայնագրի ստորագրմանը շատ մոտ փուլում»,- ասել է Թուրքիայի փոխնախագահը:

Նա նշել է, որ օրակարգի առանցքային հարցերից մեկը լինելու է նաեւ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքը»:

«Զանգեզուրի միջանցքի բացումը կնպաստի Թուրքիայի եւ Կենտրոնական Ասիայի միջեւ կապերի ամրապնդմանը, ինչպես նաեւ Միջին միջանցքի զարգացմանը: Մենք ցանկանում ենք, որ Չինաստանից մինչեւ Եվրոպա ձգվող այս տրանսպորտային ուղին ավելի հզոր դառնա»,- ընդգծել է Յըլմազը:

Թուրքիայի փոխնախագահը հավելել է, որ Անկարան ակտիվ ջանքեր է գործադրում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ կայուն խաղաղության հաստատման, ինչպես նաեւ Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերությունների լիարժեք կարգավորման ուղղությամբ:

«Այս հարցում մենք Միացյալ Նահանգների հետ ունենք նմանատիպ մոտեցումներ: Այդ պատճառով էլ բնական է, որ Հարավային Կովկասի թեման կքննարկվի Էրդողան-Թրամփ հանդիպման ընթացքում»,- նշել է Ջեւդեթ Յըլմազը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԲԱՆԿԵՐ

ԱՎԱՐՏԵԼ Է ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

7 հուլիս, Երեւան. AAA վարկանիշով միջազգային առաջատար ֆինանսական կազմակերպություններից մեկը՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) եւ Հայաստանի կապիտալի շուկայում առաջատար Կոնվերս Բանկը հայտարարում են ՎԶԵԲ-ի՝ ՀՀ դրամով պարտատոմսերի տեղաբաշխման ավարտի մասին:

Կոնվերս Բանկը գործընթացում հանդես է եկել որպես ՎԶԵԲ-ի առանցքային գործընկեր՝ իրականացնելով պարտատոմսերի թողարկման կազմակերպումն ու երաշխավորված տեղաբաշխումը:

5 միլիարդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով պարտատոմսերը տեղաբաշխվել են Հայաստանի ֆոնդային բորսայի (AMX) արժեթղթերի տեղաբաշխման հարթակում՝ աճուրդի միջոցով:



Թողարկումը ՎԶԵԲ-ի դրամային փոխառության ծրագրի մաս է եւ ուղղված է Հայաստանում տեղական արժույթով ֆինանսավորման ընդլայնմանն ու կապիտալի շուկայի զարգացմանը:

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը կներկայացվեն AMX-ում ցուցակման, ինչպես նաեւ կնախաձեռնվեն անհրաժեշտ գործընթացները՝ ՀՀ կենտրոնական բանկի ռեպո գործարքներում դրանց օգտագործման հնարավորությունն ապահովելու նպատակով:

Կոնվերս Բանկը հանդես կգա նաեւ որպես թողարկման շուկա ստեղծող (Market Maker)՝ նպաստելով պարտատոմսերի երկրորդային շուկայի իրացվելիության եւ ակտիվ առեւտրի ապահովմանը:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ ԵՆ

Ֆասթ Բանկի ֆինանսավորմամբ հիմնովին վերանորոգվել են Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի ենթակառուցվածքները: Ընդգծենք, որ թատրոնի հիմնանորոգումը ռազմավարական նշանակություն ունի. առջեւում թատրոնի հոբելյանական 85-րդ թատերաշրջանն է: Ֆասթ Բանկի շնորհիվ թատրոնն իր հանդիսատեսին կդիմավորի արդեն բարելավված եւ հարմարավետ ենթակառուցվածքներով:

«Շնորհակալ ենք Ֆասթ Բանկին այս ծրագիրն իրականացնելու համար, շնորհակալ ենք, որ հանրապետության սրտում գտնվող թատրոնին աջակցություն ցուցաբերեց, եւ մենք կարողացանք լինել այս ծրագրի մեջ, որը շատ կարեւոր քայլ է մշակույթի հանդեպ: Առանց այս համագործակցության հնարավոր չի մշակույթը զարգացնել: Փոքր-փոքր քայլերով, կարծում եմ, ավելի մեծ նվաճումներ պետք է ունենանք», - ասել է Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի տնօրենի տեղակալ Էդգար Կարապետյանը:

Հավելենք, որ Ֆասթ Բանկը շարունակական ներդրումներ է կատարում Հայաստանում մշակութային օջախների ենթակառուցվածքների հիմանորոգման մեջ՝ արժեւորելով հանդիսատեսի եւ թատրոնների աշխատակազմի արժանապատիվ մշակութային եւ աշխատանքային միջավայր ունենալը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

THE BEATLES

ՌԻՆԳՈ ՍԹԱՐԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԸ

1940 թվականի հուլիսի 7-ին ծնվել է Ռինգո Սթարը: Նա բրիտանացի երաժիշտ է եւ համարվում է ռոք երաժշտության պատմության ամենահայտնի թմբկահարներից մեկը: Իրական անունը Ռիչարդ Սթարկի է: Նա մեծ ճանաչում է ստացել որպես աշխարհահռչակ խմբի՝ The Beatles-ի անդամ:

Ringo Starr-ը ծնվել է Լիվերպուլում: Նրա մանկությունը հեշտ չի եղել. առողջական խնդիրների պատճառով նա հաճախ բացակայել է դպրոցից եւ երկար ժամանակ չի ստացել կայուն կրթություն: Սակայն հենց այդ դժվարությունները նրան մոտեցրին երաժշտությանը. սկզբում հետաքրքրվել է թմբկահարությամբ եւ արագորեն զարգացրել իր հմտությունները:

1962 թվականին նա միացավ The Beatles-ին՝ փոխարինելով նախորդ թմբկահարին: Շատ արագ դարձավ խմբի յուրահատուկ հնչողության կարեւոր մասերից մեկը: Նրա խաղաոճը առանձնանում էր պարզությամբ, «չվերաբարդացված» տեխնիկայով եւ երգի տրամադրությանը համապատասխան ռիթմ ընտրելու ունակությամբ:

Հետաքրքիր փաստեր նրա մասին: Նա հաճախ համարվում է «ամենաամփոփ ու երաժշտությանը ծառայող» թմբկահարներից մեկը՝ ոչ թե ցուցադրական, այլ թիմային ոճի համար Երգել է Beatles-ի մի շարք հայտնի երգերում, օրինակ՝ «Yellow Submarine»:

Խմբի լուծարումից հետո սկսել է հաջող մենակատար կարիերա եւ ստեղծել է Ringo Starr & His All-Starr Band նախագիծը: Նա նաեւ զբաղվել է դերասանական աշխատանքով եւ նկարահանվել մի քանի ֆիլմերում: Այսօր Ringo Starr-ը շարունակում է ակտիվ լինել երաժշտության մեջ եւ համարվում է ռոք պատմության կենդանի լեգենդներից մեկը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

Ֆուտբոլի 2026 թվականի աշխարհի առաջնության 1/8 եզրափակիչում Իսպանիայից կրած պարտությունից (0-1) եւ պայքարը լքելուց հետո Պորտուգալիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ռոբերտո Մարտինեսը հայտարարել է պաշտոնից հեռանալու մասին, հայտնում է armsport-ը: Մրցաշարում անբավարար արդյունք գրանցելուց հետո կայացած մամուլի ասուլիսի ժամանակ իսպանացի մասնագետը հաստատել է իր հեռանալու փաստը՝ նշելով, որ թիմի համար ավարտվում է մի ամբողջ ժամանակաշրջան: «Սա ցիկլի ավարտ է: Այժմ կարեւոր է, որ թիմը նոր մարզիչ ունենա: Ֆեդերացիայի նախագահն իրավունք ունի ընտրելու նոր ղեկավար: Ես շնորհակալ եմ այն ողջ աջակցության համար, որն ինձ ցուցաբերվել է»,- լրագրողների հետ զրույցում ասել է Մարտինեսը:

Նշենք, որ աշխարհի առաջնությունից հետո Ռոբերտո Մարտինեսի հնարավոր հեռացման վերաբերյալ լուրերը մամուլում շրջանառվում էին դեռեւս բավականին վաղուց: Նախքան հեռանալու մասին հայտարարելը՝ արդեն նախկին գլխավոր մարզիչն անդրադարձել է նաեւ իսպանացիների դեմ բուն հանդիպմանը՝ ընդգծելով, որ իրենք արժանի չէին նման ելքի, իսկ երկրպագուները պետք է գնահատեն ֆուտբոլիստների ջանքերը.

«Պորտուգալացի ժողովուրդը կարող է հպարտանալ այս թիմով եւ այս ֆուտբոլիստներով: Մենք շատ ենք ցավում արդյունքի համար: Մենք հարվածեցինք դարպասաձողին եւ, կարծում եմ, արժանի էինք խաղը լրացուցիչ ժամանակ տեղափոխելուն: Տղաները լավ էին պաշտպանվում՝ խաղալով աշխարհի առաջնության ֆավորիտներից մեկի դեմ: Հնարավոր է՝ մեզ պարզապես բախտը չժպտաց: Այսօր հաջողությունը մեր կողմից չէր, թեեւ խաղը միանգամայն հավասար էր»,- Մարտինեսի խոսքերը մեջբերում է ՖԻՖԱ-ի պաշտոնական կայքը: Ռոբերտո Մարտինեսը Պորտուգալիայի ազգային հավաքականի ղեկը ստանձնել էր 2023 թվականի հունվարին՝ այդ պաշտոնում փոխարինելով Ֆեռնանդու Սանտուշին: Նրա գլխավորությամբ հավաքականը 2025 թվականին նվաճեց Ազգերի լիգան:

ԲԵԼԳԻԱՆ ՋԱԽՋԱԽԵՑ

Աշխարհի 2026 թվականի առաջնության 1/8 եզրափակիչի հերթական դիմակայությունում Բելգիայի ազգային հավաքականը վստահ խաղ ցուցադրեց եւ 4:1 հաշվով խոշոր հաղթանակ տարավ ԱՄՆ-ի ընտրանու նկատմամբ՝նվաճելով քառորդ եզրափակիչի ուղեգիր, գրում է armsport-ը: Բելգիացիները հաշիվը բացեցին արդեն 9-րդ րոպեին՝ Շառլ դե Կետելարեի դիպուկ հարվածի շնորհիվ: Թեեւ 31-րդ րոպեին Մալիկ Թիլմանը վերականգնեց հավասարությունը, ընդամենը երկու րոպե անց՝ 33-րդ րոպեին, նույն Դե Կետելարեն դարձավ դուբլի հեղինակ եւ կրկին առաջ մղեց եվրոպական թիմին: Երկրորդ խաղակեսում բելգիացիներն ամբողջությամբ տիրեցին նախաձեռնությանը. 57-րդ րոպեին Հանս Վանակենը խփեց երրորդ գնդակը, իսկ հանդիպման հիմնական ժամանակին ավելացված 90+3-րդ րոպեին Ռոմելու Լուկակուն դրեց վերջակետը՝ ձեւակերպելով 4:1 վերջնական հաշիվը:

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն այսօր ընդունել է Ֆրանկոֆոնիայի խաղերի միջազգային կոմիտեի տնօրեն Վիվիեն Լյուբզանսկիին՝ քննարկելու 2027 թվականի Ֆրանկոֆոնիայի 10-րդ միջազգային մարզամշակութային խաղերի կազմակերպման մանրամասները: Ֆրանկոֆոնիայի մշտական խորհուրդը միաձայն որոշում էր կայացրել 2027 թվականի Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերի անցկացման իրավունքը շնորհել Երեւանին:

Հանդիպմանը ներկա էին նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը եւ Տիգրան Վիրաբյանը:

Ողջունելով ներկաներին՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է, որ Հայաստանի համար մեծ պատիվ եւ պատասխանատվություն է հյուրընկալել Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղերը եւ ներկայանալ ըստ պատշաճի: Ֆրանկոֆոնիայի խաղերի միջազգային կոմիտեի տնօրեն Վիվիեն Լյուբզանսկին իր հերթին նշել է կոմիտեի պատրաստակամությունը՝ հնարավորինս աջակցելու նախապատրաստական ընթացքին:

Հանդիպմանը քննարկվել են ենթակառուցվածքային պայմաններին, կողմերի միջեւ ակտիվ համագործակցությանը, իրազեկման աշխատանքներին եւ կազմակերպական խնդիրներին վերաբերող մի շարք հարցեր:

ԲԱԼՈԳՈՒՆԻ ՍԿԱՆԴԱԼԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարություն է տարածել ազգային թիմի հարձակվող Ֆոլարին Բալոգունի կարմիր քարտի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Ավելի վաղ ՈՒԵՖԱ-ն եւ ֆուտբոլային աշխարհի շատ ներկայացուցիչներ զարմանք էին հայտնել ՖԻՖԱ-ի որոշման առնչությամբ. իրական որակազրկումը փոխարինվել է պայմանականով՝ մեկ տարի փորձաշրջանով, գրում է armsport-ը: Ավելի վաղ ՋԼՄ-ներում հրապարակվել էին Թրամփի խոսքերից առանձին հատվածներ: Այժմ ներկայացնում ենք ամերիկացի առաջնորդի ամբողջական հայտարարությունը. «Ես տեսել եմ այդ դրվագը եւ լավ եմ հասկանում սպորտից: Այնտեղ խախտում չկար: Երկու հոգի հսկայական արագությամբ վազում էին եւ պարզապես բախվեցին միմյանց: Երկու հիանալի աթլետներ պարզապես խճճվեցին իրար մեջ: Իսկ այս մրցավարը, որը կասկածելի է թվում, եթե ստուգեք նրա անցյալը... Ես չեմ ուզում խոսել այդ մասին՝ վեճեր չառաջացնելու համար, բայց կարող եմ տրամադրել նրա պատմությունը: Նա կայացրեց մի որոշում, որին ոչ ոք չէր կարող հավատալ:

Ամեն ինչ այնպիսի տեսք ուներ, կարծես երկու խաղացողներ պարզապես բախվեցին իրար, եւ հենց դա էլ տեղի ունեցավ: Բալոգունը ոչ մի բանում մեղավոր չէ: Նա մեր լավագույն խաղացողն է կամ լավագույններից մեկը: Ես մտածում էի, որ կարմիր քարտը լուրջ բան է, իսկ հետո իմացա, որ նա այժմ չի կարողանա մասնակցել հաջորդ հանդիպմանը: Դա շատ անարդար է: Եթե դա պատահեր մեկ այլ խաղացողի հետ, դա եւս անարդար կլիներ, բայց այստեղ նրանք նման կերպ վարվեցին մեր լավագույն ֆուտբոլիստի հետ: Սա անարդար է: Մի բան է՝ պատժել խաղի ընթացքում: Բայց ինչպե՞ս կարելի է պատժել մի խաղի համար, որը դեռ նույնիսկ չի կայացել: Սա անարդար է: Այդպես չի կարելի: Այո՛, ես խնդրել եմ ՖԻՖԱ-ին վերանայել այդ որոշումը»,- հայտարարել է Թրամփը:

Նշենք, որ ԱՄՆ-ի եւ Բելգիայի հավաքականները 2026 թվականի աշխարհի առաջնության 1/8 եզրափակիչի հանդիպումը կանցկացնեն հուլիսի 7-ին: Խաղը կմեկնարկի Երեւանի ժամանակով 04:00-ին:

ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ Է

Ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն հաստատել է, որ հարավկորեացի վինգեր Լի Կան Ինը ՊՍԺ-ից կտեղափոխվի Մադրիդի «Ատլետիկո», հայտնում է armsport-ը: «Ամեն ինչ որոշված է: Գործարքը համաձայնեցված է բոլոր կողմերի միջեւ: Տրանսֆերի արժեքը կկազմի 40 միլիոն եվրո: Կան Ինը վաղուց էր ցանկանում տեղափոխվել «Ատլետիկո», իսկ անձնական պայմանները համաձայնեցվել էին դեռ ամիսներ առաջ»,- տրանսֆերի մանրամասներն է պարզաբանել Ռոմանոն:

Կորեացի վինգերը վերջին երեք տարիներին հանդես էր գալիս ՊՍԺ-ի կազմում: Նա իսպանական «Վալենսիայի» սան է, որտեղ էլ 2017 թվականին սկսել է իր պրոֆեսիոնալ կարիերան: 2021-ից 2023 թվականներին ֆուտբոլիստը պաշտպանել է իսպանական մեկ այլ ակումբի՝ «Մալյորկայի» գույները: Փարիզյան ակումբի կազմում Կան Ինը երեք անգամ հռչակվել է Ֆրանսիայի չեմպիոն, երկու անգամ հաղթել Չեմպիոնների լիգայում եւ նվաճել եւս մի քանի տիտղոս:

Հավելենք, որ այս ամառ Լի Կան Ինը Հարավային Կորեայի ազգային հավաքականի կազմում մասնակցել է Հյուսիսային Ամերիկայում ընթացող աշխարհի 2026 թվականի առաջնությանը, սակայն ասիական թիմին չի հաջողվել դուրս գալ խմբից:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հուլիսի 10-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Ռոմեո եւ Ջուլիետ» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս մուտք գործել հայտարարագրման էլեկտրոնային համակարգ, եթե ես եւ իմ ընտանիքի անդամները մոռացել ենք համակարգ մուտք գործելու օգտանունը եւ գաղտնաբառը:

Վիտալի Սահակյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե չեք հիշում հայտարարագրման էլեկտրոնային համակարգ մուտք գործելու գաղտնաբառը, սակայն հիշում եք Ձեր օգտանունը, ապա կարող եք սեղմել մոռացել եք գաղտնաբառը հղումի վրա եւ լրացնել համակարգում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեն, որից հետո նշված էլեկտրոնային փոստի հասցեին կստանաք էլեկտրոնային նամակ, որի միջոցով կկարողանաք սահմանել համակարգ մուտք գործելու նոր գաղտնաբառ:

Իսկ եթե չեք հիշում համակարգ մուտք գործելու ո՛չ օգտանունը, ո՛չ գաղտանաբառը, ապա անհրաժեշտ է պահանջվող տվյալները լրացնել սույն հղումով հասանելի ձեւաթղթում՝ մուտքանուն եւ գաղտնաբառ ստանալու համար: Հարկ է նկատի ունենալ, որ տարբեր գաղտնաբառեր չստանալու համար, ձեւաթուղթը լրացնելուց հետո անհրաժեշտություն չկա հաղորդակցության այլ եղանակներով կապ հաստատել հանձնաժողովի հետ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե մարդն անկեղծորեն Հայ առաքելական եկեղեցու հավատացյալ է, բայց քրիստոնեական համոզմունքները նրան խանգարում են սպանել եւ սպանվել, հատկապես պատերազմի ժամանակ, եկեղեցին ի՞նչ է մտածում այդ մարդու մասին:

Ամալյա Սարգսյան, 52 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե նա Հայ առաքելական եկեղեցու զավակ է, այդպես չի կարող մտածել, որովհետեւ Հայ առաքելական եկեղեցին խրախուսում է հայրենիքի պաշտպանությունը եւ իզուր չէ, որ ժողովուրդը եւ եկեղեցին սրբացրել են հայրենիքի պաշտպաններին: Այսինքն, հայրենիքի պաշտպանությունը սրբազան գործ է: Հայրենիքն Աստծո պարգեւն է, այն հողակտորը, երկիրը, մշակույթը, որը միանշանակ պաշտպանության կարիք ունի: Իսկ ո՞վ պետք է պաշտպանի, եթե ոչ՝ ժողովուրդը: Հայրենիքի պաշտպանությունը սպանություն չէ: Համարվում է, որ պատերազմները մղվում են արդարության վերականգնման համար: Այսինքն, եթե մեր երկրի՝ Աստծո տված այդ պարգեւի հանդեպ եղել է ոտնձգություն, հետեւաբար եկեղեցին իր ժողովրդին քաջալերում է վերականգնել արդարությունը: Եւ այդտեղ թշնամուն սպանելը պարզ, կենցաղային երեւույթ չէ, այլ դիտվում է իբրեւ հայրենիքի պաշտպանության համար կատարված սպանություն:

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 10 + 15 +19 + 23
	Կոտայքի լեռներ	+ 9 + 13 + 19 + 22
	Կոտայքի նախալեռներ	+ 16 + 18 + 24 + 27
	Գեղարքունիք	+ 9 + 14 + 16 + 21
	Լոռի	+ 13 + 16 + 19 + 22
	Տավուշ	+ 12 + 15 + 18 + 22
	Արագածոտնի լեռներ	+ 9 + 12 + 15 + 18
	Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 18 + 23 + 28

	Արարատ	+ 16 + 19 + 27 + 30
	Արմավիր	+ 16 + 19 + 29 + 31
	Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 + 15 + 18
	Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 19 + 29 + 31
	Սյունիքի լեռներ	+ 8 + 12 + 16 + 20
	Սյունիքի նախալեռներ	+ 11 + 15 + 20 + 23
	Սյունիքի հովիտներ	+ 18 + 21 + 26 + 30
	Երեւան	+ 17 + 19 + 28 + 30

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Արագածոտնի մարզում բախվել են «ՎԱԶ 21099»-ը եւ «Volvo» մակնիշի բեռնատարը. ավտոմեքենաները հայտնվել են դաշտում, բեռնատարը կողաշրջվել է. կա 3 զոհ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **07.07.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*